ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

N 02/07/9049-18

«25» 05 2018թ.

<<Հետք>> պարբերականի լրագրող
Սեդա Ղուկասյանին

Հարգելի Սեդա,
Շնորհակալություն այս հարցում հետևողականություն ցուցաբերելու համար: Ի պատասխան 21.05.2018թ. Ձեր հարցման՝ տեղեկացնում եմ.

1. Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին իմ դիրքորոշումը միշտ հիմնված է եղել մեկ սկզբունքի վրա, այն է՝ այդ համակարգը պետք է ծառայի Հայաստանի Հանրապետության և քաղաքացիների շահերին: Այս սկզբունքն արտացոլված է եղել ինչպես շարժման պահանջներում և առաջարկներում, այնպես էլ իմ հրապարակային ելույթներում և մեկնաբանություններում: Համակարգում ներգրավված ֆոնդերի կառավարիչները պետք է ունենան Հայաստանի տնտեսության իրական հատվածում ներդրումներ կատարելու պայմաններ, որոնք կստիպեն գումարները Հայաստանից դուրս բերելու փոխարեն օգտագործել ի շահ տնտեսության և քաղաքացիների:

2. Ֆոնդերը կառավարող ընկերությունների գործունեությանը ծանոթ չեմ: Միայն կարող եմ ասել, որ ուրախ կլինեի տեսնել նրանց կողմից ներդրումներ Հայաստանի տնտեսության արդյունաբերական և բարձր տեխնոլոգիական հատվածում:

3. Կարծում եմ, որ նոր կառավարությունը այս հարցին պետք է տա համակողմանի, արդարացի, քաղաքացու և երկրի շահերից բխող լուծում, և այդ լուծումը պետք է թույլ տա համակարգն աշխատեցնել այնպես, որ քաղաքացին իր վրա չզգա պարտադրանք: Ամենակարևոր պայմաններից պետք է լինի սոցիալական բաղադրիչը. աշխատողը չպետք է իր վրա սոցիալական բեռ զգա՝ համակարգին մասնակցելու պատճառով:

Հարգանքով՝ **Հակոբ Արշակյան**

Նախարարի մամուլի քարտուղար, Հեռ. 010-59-01-71

ՀայաստանիՀանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590003, էլ. փոստ՝hakob.arshakyan@mtcit.am